

Ինչպես խելամիտ կերպով օգտագործել հակաբիոտիկները

Կարդացեք ստորև ներկայացված խորհուրդները՝ իմանալու, թե ինչպես կարող եք հակաբիոտիկները ճիշտ օգտագործել:

Խորհուրդ #1

Իմացեք տարբեր բացիլների մասին:

Մեզ կարող են հիվանդացնել տարբեր բացիլներ: Հիվանդությունների մեծ մասն առաջանում է բակտերիա կամ վիրուս կոչվող բացիլներից: Միայն որոշ բացիլներ կարող են ոչնչացվել դեղերի միջոցով:

Խորհուրդ #2

Իմացեք, թե որոնք են ձեզ համար ճիշտ դեղերը:

Նույն դեղամիջոցը չի կարող օգտագործվել բոլոր բացիլների դեմ: Հակաբիոտիկները դեղամիջոցներ են, որոնք ոչնչացնում են բակտերիաները, բայց չեն ազդում վիրուսների վրա: Ձեր բժիշկը կարող է ասել, թե որ դեղամիջոցն է ճիշտ ձեզ կամ ձեր երեխայի համար:

Խորհուրդ #3

Ճիշտ կերպով օգտագործեք ձեր դեղերը:

Հակաբիոտիկները պետք է նշանակվեն բժշկի կողմից: Բժիշկը կբացատրի, թե ինչպես ճիշտ ընդունել հակաբիոտիկները: Ընդունեք ձեր բժշկի նշանակած բոլոր դեղերը, նույնիսկ եթե դուք կամ ձեր երեխան սկսում եք ձեզ ավելի լավ զգալ: Երբեք ձեզ նշանակված դեղերը մի տվեք ընկերներին կամ ընտանիքի անդամներին՝ օգտագործելու համար:

Սովորաբար ո՞ր բացիլներն են առաջացնում այս հիվանդությունները...

Հիվանդություն	Վիրուս	Բակտերիա	Հակաբիոտիկներ պե՞տք են
Մրսածություն	✓		Ոչ
Գրիպ (ինֆլուենցա)	✓		Ոչ
Բրոնխիտ	✓		Ոչ
Քթահոսություն	✓		Ոչ
Ականջի վարակ		✓	Երբեմն
Սինուսային վարակ		✓	Երբեմն
Ստրեպտոկոկային կոկորդ		✓	Այո, եթե ձեր բժիշկը հաստատում է

Հավելյալ տեղեկությունների կարի՞ք ունեք

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն՝
www.publichealth.lacounty.gov

Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչություն՝
www.cdph.ca.gov/Pages/NR10-090.aspx

Հիվանդությունների Կանխարգելման և Վերահսկման Կենտրոններ՝
www.cdc.gov/getsmart/index.html



Հակաբիոտիկների խելամիտ օգտագործում

Ուղեցույց ծնողների և ինամակալների համար



Իմացեք ավելին խորհուրդների մասին

Ի՞նչ գիտեք հակաբիոտիկների ճիշտ օգտագործման մասին: Իմացեք ավելին երեք խորհուրդների մասին, որոնք կօգնեն ձեզ ճիշտ օգտագործել այս դեղամիջոցը:

Խորհուրդ #1

Իմացեք տարբեր բացիլների մասին:

Մեզ կարող են հիվանդացնել տարբեր բացիլներ: Հիվանդությունների մեծ մասն առաջանում է բակտերիա կամ վիրուս կոչվող բացիլներից: Բակտերիան կարող է առաջացնել այնպիսի վարակներ, ինչպիսին ստրեպտոկոկային կոկորդն է: Վիրուսը կարող է առաջացնել գրիպ (ինֆլուենցա): Միայն որոշ բացիլներ կարող են ոչնչացվել դեղերի միջոցով:

Խորհուրդ #2

Իմացեք, թե որոնք են ձեզ համար ճիշտ դեղերը:

Նույն դեղամիջոցը չի կարող օգտագործվել բոլոր բացիլների դեմ: Հակաբիոտիկները դեղամիջոցներ են, որոնք կարող են օգնել բուժել բակտերիալ վարակները, ինչպես օրինակ՝ միջին ականջի և սինուսային վարակները: Ձեր բժիշկը կարող է ասել, թե որ դեղամիջոցն է ճիշտ ձեզ կամ ձեր երեխայի համար:

Հակաբիոտիկները չեն կանխարգելի կամ բուժի գրիպը, մրսածությունը, հազը, քթափոսությունը և կոկորդի ցավերի մեծ մասը: Կան քայլեր, որոնք դուք կարող եք անել, որպեսզի օգնենք ձեր երեխային ավելի լավ զգալ, երբ նա հիվանդ է:

Ձեր երեխան ավելի լավ կզգա, եթե նրան օգնեք՝

- Հանգստանալ
- Շատ հեղուկ խմել
- Ընդունել ացետոմինոֆեն (Tylenol) կամ իբուպրոֆեն (Advil), երբ ջերմություն կամ ցավ ունի
- Ուտել առողջարար սնունդ
- Օգտագործել գոլորշու սարք (vaporizer)

Խորհուրդ #3

Ճիշտ կերպով օգտագործեք ձեր դեղերը:

Հակաբիոտիկները պետք է նշանակվեն բժշկի կողմից: Բժիշկը կբացատրի, թե ինչպես ճիշտ ընդունել հակաբիոտիկները: Ընդունեք ձեր բժշկի նշանակած բոլոր դեղերը: Երբեք մի տվեք ձեզ նշանակված դեղերը ընկերների կամ ընտանիքի անդամներին՝ օգտագործելու համար: Երբեք մի օգտագործեք ուրիշների դեղերի մնացորդները:

Հակաբիոտիկներ օգտագործելն այն դեպքում, երբ դրա կարիքը չկա կամ «ամեն դեպքում», ավելի շատ վնաս կտա, քան օգուտ: Դուք կարող եք ունենալ կողմնակի ազդեցություններ, և ձեր օրգանիզմում ապրող բակտերիաները կարող են դառնալ հակաբիոտիկի նկատմամբ կայուն: Սա նշանակում է, որ հետագայում հակաբիոտիկը չի գործի իրական վարակը բուժելու համար: Եթե մենք հակաբիոտիկները սխալ օգտանործենք, կարող ենք այլևս չունենալ այդ բացիլները ոչնչացնելու միջոցներ: Ահա թե ինչու մենք պետք է օգտագործենք հակաբիոտիկները միայն անհրաժեշտության դեպքում:

Առողջ մալու լավագույն ուղիները հետևյալն են.

- Հետևեք, որ ձեր և ձեր երեխայի պատվաստումներն արվեն ժամանակին: Պատվաստանյութերը, օրինակ՝ գրիպի ամենամյա պատվաստանյութերը, կարող են պաշտպանել ձեր երեխային:
- Խուսափեք հիվանդ մարդկանց հետ սերտ շփում ունենալուց: Եթե հիվանդ եք, որքան հնարավոր է մնացեք տանը և հեռու ուրիշներից:
- Օգտագործեք ձեր հագուստի թևը, ոչ թե ձեր ձեռքը, երբ հագում կամ փոշտում եք:
- Օգնեք ձեր երեխային հաճախ լվանալ ձեռքերը: Ձեռքերը լավ լվանալը կանգնեցնում է բացիլների տարածումը: Սովորեցրեք նրանց հետևել այս քայլերին.
 1. Ձեռքերն իրար շփել, որպեսզի առաջանան պղպաղակներ
 2. Երգել ABC-ն կամ Happy Birthday-ը
 3. Օգտագործել տաք ջուր և օճառ
 4. Օգտագործել մաքուր սրբիչներ՝ ձեռքերը չորացնելու համար:

